# ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/45»

ք. Երևան

<< 8 >> սեպտեմբերի 2022թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ի. Օսիպյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և «ՊՐՈՖ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունը (այսուհետև՝ Վաճառող) ի դեմս ընկերության տնօրեն Է. Եղոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 ԳՆՈՐԴՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ջննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

## 2.2 ԳՆՈՐԴԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

## 2.3 ՎԱՃԱՌՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

## 2.4 ՎԱՃԱՌՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 53000000 (հիսուներեք միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող

ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.12 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.13 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչությունը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան ---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՊՐՈՖ ԹՐԵՅԴ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բակունցի 2-65
ՀՀՎՀ 08217004
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2480102764050000

Է. Եղոյան ---------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
« 8 » սեպտեմբերի 2022թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-22/45» ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | մատակարարման | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 42991330/502 | **Մաքրման սարքի** /ավտոբուսների և տրոլեյբուսների դարպասայինլվացակայան/ **ձեռքբերում հետագա տեղադրումով, կարգաբերումով և գործարկումով** | Портальная мойка CB- 730 ԾՑ-730 ООО «Крисенсе - РУ» | Ներկայացված է ստորև | հատ | 53000000 | 53000000 | 1 | ք Երևան, Թևոսյան 12 | 1 | Սույն պայմանագիրը (համաձայնագիրը) ուժի մեջ մտնելու օրվանից 90-րդ օրը ներառյալ |

ապորտալ ավտոլվացման կետ տրոլեյբուսների **և** ավտոբուսների համար
պրանքի նկարագրություն
ապորտալ ավտոլավացման սարքավորումը (լվացող պորտալ) պետք է ծառայի մինչև 19 մ երկարությամբ, 3,9 մ բարձրությամբ և 2,9 մ լայնությամբ տրոլեյբուսներիս
տոբուսների լվացման համար:
անալու ժամանակ տրոլեյբուսը (ավտոբուսը) պետք է գտնվեն անշարժ վիճակում, իսկ լվացող պորտալը, պտտվող խոզանակներով, պետք է տեղաշարժվի տրոլեյբուսի
վտոբուսի) երկայնքով՝ ռելսերի վրայով (ռելսերը լիամարմին են, պատրաստված են պողպատե գլանվածքից, ռելսուղու երկարությունը 24-30 մետր է): Ռելսերի և լվացող պորտալի
և պետք է նախատեսված լինեն մեխանիկական սարքեր, որոնք պետք է կանխեն լվացող պորտալի ռելսերից ընկնելը և դրա շուռ գալը: Ավտոբուսի տանիքը լվանալու համար
տք է նախատեսված լինի հորիզոնական խոզանակ: Տրոլեյբուսի և ավտոբուսի դիմացի և հետևի ճակատային մակերևույթները լվանալու համար պետք է նախատեսված լինի
ացող պորտալի ուղղաձիգ խոզանակների՝ լայնական ուղղությամբ տեղաշարժման մեխանիզմ: Ջրի (լվացող լուծույթի) մատուցումը պետք է իրականացվի լվացող պորտալի վրա
ղակայված ջրամղիչների միջոցով: Լվացող պորտալը պետք է համալրված լինի՝ լվացող պորտալի միացման «գիրլյանդային» համակարգով, տրոլեյբուսի և ավտոբուսի
րքավորման համակարգով, լվացող հեղուկի մատուցման համակարգով, մաքուր ջրողցայելու համակարգով,օդային կոմպրեսորովչորացման համակարգ, ջրի բարձր ճնշման
ջոցով լվանալու համակարգ,հատակի լվացման հնարավորություն,կառավարման վահանակով, ջրի ցայտերից պաշտպանող համակարգով բոլոր խոզանակների վրա, այդ թվում՝
րիզոնական, ռեագենտ քիմիկատների միջոցով չորացման համակարգ:

դրային ապահովման կարգավորումներից կախված լվացումը պետք է իրականացվի ինչպես ավտոմատ, այնպես էլ ձեռքի ռեժիմում, ինչպես նաև թունելային լվացման ռեժիմում ոբուսի տեղաշարժումը պտտվող խոզանակներով անշարժ լվացող պորտալի միջով):
ոմատ ռեժիմի դեպքում պետք է լինի առնվազն երեք ռեժիմ ընտրելու հնարավորություն
լացող հեղուկ, խոզանակների աշխատանք, ջրի բարձր ճնշման տակ արագ լվացում, օդային կոմպրեսորի միջոցով չորացում
վացող հեղուկ, ջրի բարձր ճնշման տակ արագ լվացում, օդային կոմպրեսորի միջոցով չորացում
րի բարձր ճնշման տակ արագ լվացում, օդային կոմպրեսորի միջոցով չորացում
արքը պետք է ունենա լվացման ցիկլը (լվացվող ավտոբուսների և տրոլեյբուսների) քանակը հաշվելու հնարավորություն,որը պետք է պահպանվի առնվազն 5 (հինգ) տարի:
ցող պորտալը պետք է կահավորված լինի անվտանգության համակարգով, որի նպատակը խոզանակների միանալը կանխելն է, եթե դրանց գործողության գոտում մարդիկ . Լվացող պորտալի հետ պետք է տրամադրվեն հետահար հարմարանքներ, որոնք կապահովեն տրոլեյբուսի և ավտոբուսի խիստ ուղղագծային երթևեկությունը լվացող տալի գործողության գոտում՝ առանց ռելսերի առանցքային ուղուց շեղվելու:

**2.** Տեխնիկական բնութագրեր

ցող պորտալի գաբարիտային բարձրությունը (հորիզոնական խոզանակով), ոչ ավել, քան՝
) մմ
ցող պորտալի գաբարիտային լայնությունը, ոչ ավել, քան՝ 5200 մմ, Լվացող պորտալի գաբարիտային լայնությունը, ոչ ավել, քան՝ 3000 մմ,
երկարությունը՝
ռուղու

ցող պորտալի զանգվածը, ոչ ավել, քան՝ 3000 կգ, էլեկտրասնուցման լարումը (50Հց, 3 ֆազ) ՝ 380 Վ էլեկտրաշարժիչների գումարային հզորությունը, ոչ ավել, քան՝ 16,05 կՎտ
շտպանության դասը, ոչ պակաս, քան՝ 1Բ66
ր ճնշման /6-8 բալ/ ջրի առավելագույն ծախսը, ոչ ավել, քան՝ 130 լ/րոպե
երկարությամբ մեկ տրոլեյբուսի (ավտոբուսի) լվացման ժամանակը, ոչ ավել, քան՝ 5 րոպե

**3.** Տրոլեյբուսների **և** ավտոբուսների միապորտալ ավտոլվացման կետի կոնստրուկցիային ներկայացվող պահանջներ

Պորտալի կրող կոնստրուկցիաներ
ապորտալ լվացման կետի շրջանակը պետք է պատրաստված լինի կոնստրուկցիայի կայունությունը և ամրությունը ապահովող պողպատե պրոֆիլից և ունենա ապահով շտպանություն կոռոզիայից (տաք ցինկման մեթոդով), ինչը կապահովի կայանքի երկարատև շահագործումը ագրեսիվ միջավայրի ազդեցության պայմաններում:
անակի պրոֆիլի հատույթը պետք է լինի ոչ պակաս, քան 200x300 մմ, պորտալի շրջանակի կանգնակինը՝ ոչ պակաս, քան 330x300 մմ, խոզանակների ամրացման անակինը՝ ոչ պակաս, քան 120x60 մմ, պրոֆիլի մետաղի հաստությունը՝ առնվազը 5 մմ:
տալի վրա պետք է տեղակայված լինեն մեխանիկական սարքավորումներ, որոնց խնդիրն է թույլ չտալ պորտալի՝ ռելսերից դուրս ընկնելը կամ շուռ գալը: **3.2Պորտալի ժաբերը արագության կարգավորիչով**
ժաբերը պետք է ապահովի պորտալի սահուն ընթացքը և շարժման արագության սահուն (ոչ աստիճանձև) կարգավորումը 0-ից մինչև 18 մ/րոպե միջակայքում՝ հաճախության սակերպիչի օգնությամբ:
ցող պորտալի ընթացքային անիվները պետք է տեղակայված լինեն առանցքակալների վրա, ապահովելով դրանց սպասարկման հնարավորությունը:
ժաբերի շարժիչ-ռեդուկտորները պետք է կահավորված լինեն ալյումինից պատրաստված, առնվազը 1Ր66 պաշտպանության աստիճան ունեցող կոռոզիադիմացկուն մներով, շարժիչի հզորությունը պետք է լինի ոչ ավել, քան 0,25 կՎտ, շարժիչ-ռեդուկտորները պետք է հասանելի լինեն տեխնիկական սպասարկման համար՝ առանց լվացող տալի մնացած հանգույցների և ագրեգատների ապամոնտաժման: **3.3Պորտալի ընթացքային ռելսերը**
լուղին պետք է ունենա 24-30 մ երկարություն, ռելսերը պետք է լինեն հոծ (լիամարմին), ծուլածո պրոֆիլից, դրանց միացման տեղերը եռակցված են. ռելսերը հատակին րագվում են դյուբելների օգնությամբ: Ռելսուղու շահագործման ժամկետը՝ առնվազը 5 տարի: Ռ-ելսի լայնական հատույթի ձևը պետք է նախատեսի լայնացում՝ լվացող պորտալի ս տեղակայված սարքավորման հետ հուսալի կառչումը ապահովելու և պորտալի՝ ռելսերից դուրս ընկնելը կամ շուռ գալը կանխարգելելու նպատակով:

Միապորտալ լվացման կետի միացման «գիրլյանդային» համակարգը
ցման «գիրլյանդային» համակարգում պետք է ներառված լինեն բռնիչներ, ուղղորդիչներ (առնվազը 24 մ) և սայլակներ (առնվազը 6 հատ), պորտալի միացման համակարգի
լներ և փողրակներ (առնվազը 36 մ):
ակարգը պետք է ապահովի լվացող պորտալի աշխատանքը և տեղաշարժը՝ մինչև 19 մ երկարությամբ երկհատված տրոլեյբուս և ավտոբուս լվանալիս:
Լվացող խոզանակները **և** դրանց շարժաբերը
ցող պորտալի վրա պետք է տեղադրված լինենառնվազն երկու ուղղաձիգ և մեկ հորիզոնական խոզանակներ: Կողային խոզանակները պետք է տեղակայված լինեն երկակի
նցքակալների վրա (լվացող պորտալի շրջանակի վերևից և ներքևից): Կողային խոզանակները պետք է հավասարաչափ սեղմվեն տրոլեյբուսի (ավտոբուսի) իրանին և
ահովեն ոչ կոպիտ ներգործություն՝ լվացման գործընթացի կայուն բարձր որակ ապահովելու համար: Լծակների կոնստրուկցիան պետք է ապահովի ավտոբուսի կենտրոնական
վածի «երկակի ծածկումե ուղղաձիգ խոզանակների կողմից: Խոզանակի լիսեռի տրամագիծը՝ առնվազը 120 մմ:
ցող պորտալը պետք է ունենա սեղմող ուժի հարթ կարգավորում էլեկտրոնային ղեկավարմամբ (անկախ կարգավորում խոզանակներից յուրաքանչյուրի համար), ինչը
ահովի խոզանակների կիպ հպումը լվացվող մակերևույթին և ավտոբուսի կամ տրոլեյբուսի կախովի մասերի անվնասությունը:
ցող խոզանակներից յուրաքանչյուրը պետք է ունենա սեգմենտային կոնստրուկցիա (առնվազը 22 սեգմենտ՝ ուղղաձիգ և առնվազը 16 սեգմենտ՝ հորիզոնական խոզանակների
), ինչը թույլ կտա ըստ ցանկության փոխել խոզանակի ցանկացած սեգմենտ՝ առանց լվացող պորտալի վրայից լիսեռը ապամոնտաժելու:
ցման բարձրությունը՝ 3,9 մ, լվացման լայնությունը՝ 2,9 մ, խոզանակի տրամագիծը՝ առնվազը՝ 1000 մմ (վերին հատվածում՝ 1100 մմ ՝ արդյունավետ լվացման համար):
անակների աշխատանքի պաշարը՝ առնվազը 200.000 առնվազն 4 տարի) լվացման ցիկլ (Խոզանակների աշխատանքի պաշարը՝ առնվազը 200.000 առնվազն 4 տարի
ահովելու դեպքում փոխարինվում է մատակարարի կողմից և միջոցներով):Խոզանակների նյութը պետք է լինի գծային պոլիէթիլեն:
իզոնական խոզանակի շարժումը (բարձրացում/իջեցում), ինչպես նաև կողային խոզանակների մոտեցում/հեռացումը պետք է կատարվի շարժաբերներով, որոնք կապահովեն
ժման անհրաժեշտ հարթ ընթացքը և ճշգրտությունը, և չունեն յուղման բաց տեղամասեր: հորիզոնական խոզանակի բարձրացում/իջեցումը պետք է կատարվի ճկուն կաշեփոկ
ցող շարժաբերով՝ ամրանավորված մետաղակորդով: Հորիզոնական խոզանակի տեղաշարժը պետք է իրականացվի երկու կաշեփոկերի օգնությամբ (յուրաքանչյուր կողմից),
լ լիովին կերաշխավորի անվտանգությունը նույնիսկ կաշեփոկերից մեկի կտրվելու դեպքում: Կողային խոզանակների տեղաշարժը պետք է իրականացվի մաշակայուն
ամնավոր ծողաքանոնի և ատամնանիվի օգնությամբ:
անակների մոտեցման շարժաբերի շարժիչի հզորությունը պետք է լինի ոչ ավել, քան 0,25 կՎտ:
զանակների պտտման շարժաբերի շարժիչ-ռեդուկտորները պետք է ունենան կոռոզիակայուն իրաններ ալյումինից՝ առնվազը IP66 պաշտպանության աստիճանով,
անակների պտտման շարժիչի հզորությունը՝ ոչ ավել քան 1,1 կՎտ, շարժիչ-ռեդուկտորները պետք է հասանելի լինեն տեխսպասարկման համար՝ առանց պորտալի այլ
գույցների կամ ագրեգատների ապամոնտաժման:
Պաշտպանությունը ուղղաձիգ **և** հորիզոնական խոզանակների ցայտերից
շտպանությունը ցայտերից պետք է ապահովի լվացման սրահի պատերի և կրող կոնստրուկցիաների պաշտպանությունը ջրի շիթերի և ցայտերի ուղղակի ներգործությունից՝
